Հաստատում եմ
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
նախագահի առաջին տեղակալ՝ Ս.Լպուտյան

2024թ. «13» «մարտի»

Հայաստանի պատանիների և աղջիկների 2024թ. առաջնության

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Առաջնության կազմակերպիչը.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2024թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերի կազմակերպիչն է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:

Անցկացման նպատակը.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2024թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերի անցկացման նպատակն է 8-18 տարեկան տարիքային խմբերի 2024թ. չեմպիոններին և մրցանակակիրներին որոշելը: Մրցաշարը հանդիսանում է ընտրական փուլ՝ Եվրոպայի և աշխարհի պատանիների և աղջիկների առաջնությունների համար:

Անցկացման վայրը.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2024թ. առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն Հայաստանի շախմատի ակադեմիայում (հասցե՝ Շևչենկո 34, ք. Երևան, Հայաստան,հեռ. +37410440105):

Անցկացման ձևաչափը.

Առաջնությունն անցկացվում է հետևյալ տարիքային խմբերով.

- մինչև 8 տարեկան տղաներ
- մինչև 10 տարեկան տղաներ և աղջիկներ
- մինչև 12 տարեկան տղաներ և աղջիկներ
- մինչև 14 տարեկան պատանիներ և աղջիկներ
- մինչև 16 տարեկան պատանիներ և աղջիկներ
- մինչև 18 տարեկան պատանիներ և աղջիկներ

Առաջնությունն անցկացվում է ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների համաձայն՝ շրջանային մրցակարգով: Մ8, Մ10 և Մ12 տարեկան տղաների խմբերի մրցաշարերը, Մ10 և Մ12 տարեկան աղջիկների խմբերի մրցաշարերը անցկացվում են 12 մասնակիցներով, մնացած տարիքային խմբերի մրցաշարերը 10 մասնակիցներով:

Ժամակարգը.

Յուրաքանչյուր մասնակցին տրվում է 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Հաղթողների որոշման կարգը.

Մրցաշարում տեղերը բաշխվում են համաձայն հավաքած առավելագույն միավորների: Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր տարիքային խմբերում տեղերը կորոշվեն հետևյալ լրացուցիչ ցուցանիշներով.

1. *ըստ Զոնեբորն-Բերգերի համակարգի,*
2. *ըստ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի,*
3. *ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,*
4. *ըստ հաղթանակների առավելագույն քանակի:*

Առաջնության անցկացման ժամկետները.

Հայաստանի պատանիների և աղջիկների առաջնության եզրափակիչ մրցաշարերը կանցկացվեն ս.թ. ապրիլի 11-ից 21-ը:
Մրցաշարի բացումը՝ ապրիլի 12-ին ժամը 14:30–ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 12-ին մեկնարկելու է մինչև 8տ, 10տ., 12տ. տղաների և 10տ., 12տ. աղջիկների մրցաշարերը: Մյուս տարիքային խմբերի 1-ին խաղափուլը կմեկնարկի ապրիլի 13-ին: Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե:

Խաղասրահ չի թույլատրվում ներկայանալ բջջային հեռախոսներով և այլ էլեկտրոնային սարքերով: Խաղի ընթացքում մասնակցի մոտ էլեկտրոնային սարքեր հայտնաբերվելու դեպքում, համաձայն ՖԻԴԵ-ի կանոնների, կգրանցվի պարտություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

11 – 21 ԱՊՐԻԼԻ, 2024Թ.

Հայաստանի պատանիների և աղջիկների 2024թ. առաջնության կազմակերպիչն է Հայաստանի շախմատի ֆեդերացիան:

Հայաստանի պատանիների և աղջիկների 2024թ. առաջնության անցկացման նպատակն է 8-18 տարեկան տարիքային խմբերի 2024թ. չեմպիոններին և մրցանակակիրներին որոշելը:

Մրցաշարը հանդիսանում է ընտրական փուլ՝ Եվրոպայի և աշխարհի պատանիների և աղջիկների առաջնությունների համար:

Ժամանակացույց

Մինչև 8, 10, 12 տարեկան պատանիներ և 10, 12 տարեկան աղջիկներ.

11 ապրիլի – ժամանման օր	
12 ապրիլի – բացման արարողություն	14:30
12 ապրիլի – 1 տուր	15:30
13 ապրիլի – 2 տուր	15:00
14 ապրիլի – 3 տուր	11:00
14 ապրիլի – 4 տուր	16:00
15 ապրիլի – 5 տուր	15:00
16 ապրիլի – 6 տուր	15:00
17 ապրիլի – 7 տուր	15:00
18 ապրիլի – 8 տուր	15:00
19 ապրիլի – 9 տուր	15:00
20 ապրիլի – 10 տուր	15:00
21 ապրիլի – 11 տուր	11:00
21 ապրիլի – փակման արարողություն	16:30
22 ապրիլի – մեկնման օր	

Մինչև 14, 16, 18 տարեկան աղջիկներ և պատանիներ

12 ապրիլի – բացման արարողություն	14:30
13 ապրիլի – 1 տուր	15:00
14 ապրիլի – 2 տուր	15:00
15 ապրիլի – 3 տուր	15:00
16 ապրիլի – 4 տուր	15:00
17 ապրիլի – 5 տուր	15:00
18 ապրիլի – 6 տուր	15:00
19 ապրիլի – 7 տուր	15:00
20 ապրիլի – 8 տուր	15:00
21 ապրիլի – 9 տուր	11:00
21 ապրիլի – փակման արարողություն	16:30
22 ապրիլի – մեկնման օր	